

Պ. ԳՐՈՒՆՈՒ ՔՐԵՍՏՈՒԿԵԱՆԱ Վ. ԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ԽԲԵԼ ԴԱՍԱԳԻՐՔ.

Խւրաքանչիւր որ, երբոր ձեռնէրէց է լինում մի բան գրելու՝ պէտք է հետևեալ երկու հանգամանքները լաւ ի նկատի ունենայ: Ա. պէտք է լաւ ըմբռնած լինի գրելի նիւթը՝ իւր բոլոր մանրամասնութեամբ: Բ. ըստ ամենայնի պէտք է յարմարեցնի այն նպատակին՝ որի համար գրվումէ:

Երբոր մինը գրումէ վիպասանութիւն՝ նա աչքի առաջ ունենալով իւր գրքի ընթերցող հասարակութեանը՝ պէտք է վիպասանութեան հերոսներին այնպիսի դեր կատարել տայ, որ համապատասխան լինի ընթերցող հասարակութեան ճաշակին: Երբոր մինը գրումէ մի պատմական գրուածք՝ պէտքէ դարձեալ աչքի առաջ ունենայ ընթերցող հասարակութիւնը, և նիւթը ըստ այնմ յարմարացնի գրուածքի ոճին, առանց պատմական անցքերի ճշմարտութիւնը խեղաթիւրելու:

Ա. յգպիսի գրուածքները, եթէ ունենան էլ ինչ և իցէ մանր մունր պակասութիւններ, կարող են, եթէ ոչ բոլորովին յարգի, գոնէ անպէտք չըհամարուիլ: Բայց ինչ որ գրվումէ մանուկների համար, նոցա միտքը, բարքն ու վարքը կրթելու և ազնուացելու պատճառով՝ պէտքէ շատ ինամքով յօրինուած լինի: ապա թէ ոչ, փոխանակ իւր նպատակին ծառայելու, կարող է իրեւ անպէտք բան դուրս ձգուիլ թէ դասագրերի կարգից և թէ ընթերցանելի մատեանների շարքից:

Դասագիրք գրողը ի միջի այլոց երկու բան յատկապէս պէտք է ի նկատի ունենայ: Նախ առարկայի ամիոփումն և կարգին դասաւորութիւնը, այնպէս՝ որ ամենահարկաւորները մոռացուած չըլինին, և խառն ի խուռն դրուելով՝ շփոթութիւն չըպատճառեն: Երկրորդ՝ պէտք է յարմարացնել մանուկների հասկացողութեանը այնպէս, որ աշակերտները կարդացածները հասկանան և աստիճանարար առաջ գնալով՝ ամբողջ առարկան իւր էական սկզբունքով իւրացնեն:

Արդի մանկավարժութեան հիմունքը լեզուով դաստիարակութիւնն է համարվում: ուստի դասագիրք յօրինողը ի նկատի ունենալով այս սկզբունքը, պէտքէ դասագրքի համար մանուկների մայրենի լեզուն ընտրի, այսինքն այն լեզուն, որով մանուկները խօսումեն, անշմարելի կերպով գեղջկական դարձուածների և ուամկական բառերի տեղ՝ գրականականը գործ դնելով: որով մանուկը թէ առարկան կըսովորի իւր մայրենի դիւրըմբռնելի լեզուով և թէ կըգրաժուի իւր մայրենի լեզուի աւելի կատարելագործուած ձեին:

Պէտք է խոստովանել նաև, որ ամենաերկելի միտք ամենահետաքրքիր մի առարկայ երբ գրուած է լինում խառն ի խուռն ոճերով ու դարձուածներով, միշտ ամեն մինից մերժվումէ, և ոչ ոք չի ախորժում կարդալ: Նախնեաց գրուածոց մէջ անդամ այն մատեանները, որոնք

գրուած են ընտիր ոճով, գեղեցիկ դարձուածներով ու լեզուով, ամեն ախորժանք կարդացվում են, օրին. Եղիշէի Աարդանանց պատմութիւնը, Ա. գիրքը ևլն. Իսկ այնպիսիները, որոնք ընտիր ոճ, գեղեցիկ դարձուածք ու լեզու չունին. թեև շատ հետաքրքիր բովանդակութիւն էլ ունենային, չեն կարդացվում, կամ շատ սակաւ են կարդացվում, օրինակ. Աազար Փարպեցու գրուածքները, Դաւիթ անյաղթի թարգմանութիւնները, և մրնչե անգամ Մովսէս խորենացու «Գիրք պիտոյիցը» :

Արդի աշխարհաբառի մէջ ևս, այն բոլոր գրուածքները, որոնք խճողուած են աշխարհաբառի և գրաբառի դարձուածներով, կամ թարգմանութիւնները, որոնք բնագրի ոճը ունեն, միայն հայերէն բառերով՝ այնպէս չեն կարդացվում ինչպէս կարդացվումնեն մի քանի գրուածքներ, որոնք կամ բոլորովին պարզ Արտերեւու բարբառով են, կամ Կ. Պոլսոյ և կամ ընտիր գրաբառ:

Հեղինակը կամ թարգմանիչը պէտքէ գիտենայ թէ ո՞ւմ համար է հրատարակում իւր գիրքը, Թուսահայերի՞ թէ Տաճկահայերի համար։ Տաճկահայերի համար՝ Կ. Պոլսոյ մշակուած աշխարհաբառը պէտքէ գործածել. իսկ Թուսահայոց համար՝ Արարատեանը, որ վերջին տարիներս բաւական մշակուելով՝ կարող է մրցել Կ. Պոլսոյ բարբառին։

Միշտ եղել են անձինք, որ ջանացել են լեզուն գիւրուսանելի դարձնելու համար քմահաճոյ ձեւեր ու ոճեր գործ ածել. բայց այդպիսիները բնաւ իւրեանց նպատակին չըհասնելուց յետոյ, ստիպուել են իւրեանց բռնած ընթացքը թողնել, շատ անգամ աւելի ծայրայեղութեան մէջ ընկնելով։

Հանգ. Նաղարեանը պարագլուխը լինելով Արարատեան բարբառի մշակողների, իւր Հանդէս նոր հայախօսութեան և Հիւսիսափայլի մէջ կամենումէր ինքնահնար բարդութիւններ ու ոճեր և քերականական իւրաստեղծ կանոններ հնարելով՝ հարստացնել Արարատեան բարբառը և ճկուն դարձնել. Նոյն ինքն նաղարեանը, որ իւր գրուածքների ճակատին դրոշմումէր հետևեալ բովանդակութեամբ մի բան, դժուարին է մեռեալը յարուցանել, բայց աւելի ևս դժուարին՝ հին գրաբառ լեզուով այժմեան ժողովուրդը լուսաւորել. իւր այս սկզբունքի հակառակ, յառաջ որ կամենումէր իւրաստեղծ լեզուն փաթաթել ամբոխի շնչին, սկսեց աւելի ևս ծայրայեղութեան դիմել ներսիսեան Դպրոցի մանուկների համար պատրաստած իւր «Տեսական և գործնական առաջնորդ ոռուաց լեզուի» վերնագրով գրքովը։ Ուր Հանգուցեալը գրաբառի դարձուածները խրթին, ինչպէս ասումեն, որոտընդոստ բառերի հետ գործ ածելով՝ բոլորովին շեղումէ իւր նպատակից։ Այսպիսի ծայրայեղութիւններ Կ. Պոլսոյ գրական բարբառի մէջ ևս նկատվում է ոմանց գրուածներում։ Պ Մինաս Զերազ Արարատեան և Կ. Պոլսոյ բարբառների միացումը ցանկանալով, մի տարօրինակ աղջատուած բարբառի հեղինակ պէտք գտնար։

Պարոնը լսած լինելով թէ Արարատեան բարբառի մէջ բառերի սեռականները է են վերջանում։ սկսեց անխտիր նոյնը գործածել, գրելով։ Գնալի, (գնալու), ասելի (ասելու), տունի (տան), կինի (կնոջ) և լու։

Կան նաև այնպիսիներ, որոնք աշխատումեն աշխարհաբառը մշակելով գրաբառին մօտեցնել։ Այդ աշխատանքը բոլորովին զուր է։ որովհետեւ աշխարհաբառը միշտ աշխարհաբառ կը մնայ, իսկ այդպիսիները աշխարհաբառի մատենագրութեան պատմութեան մէջ այնպիսի տեղեր կը գրաւեն, որպիսին գրաւել են գրաբառի մատենագրութեան պատմութեան մէջ Մինաս վարդապետ Համբեցի, Արքահամ կաթուղիկոս Կրետացի, Զաքարիա սարկաւագ Յովհաննավանքի և նոյն ինքն Արմատ Գունդստարէ և լու։

Այսպէս ուրեմն երկու բարբառների և գրաբառի դարձուածներ միասին խառն գործածողները, փոխանակ ունքը շիտկելու՝ աչքն էլ չանումեն. որովհետեւ այդպիսի գրուածքները թէ Տաճկահայը թէ Ռուսահայը և թէ գրաբառի մատենագրութիւնը իւրեանց խորդ վիժածը Համարելով՝ մերժումեն։

Իմ կարծիքով, պէտքէ աշխատել երկու բարբառներն էլ մշակելով վերջին կատարելութեանը հասցնել, առանց հացան կանխակալ կարծիքին ու ջանքին ենթարկուելու։ Եթէ հարկ լինի, ինքն ժամանակը անշըշմարելի կերպով կը միացնի երկու բարբառները, և կամ մինը միւսին տեղի կը տայ, ինչպէս գրաբառը աշխարհաբառին տեղի տուեց։

Այս համառօտ ներածութիւնը անելուց յետոյ խօսքս մասնաւորեմ մի գրուածքի վերայ, որ անցեալ տարի տպագրուեց։ Այս գրուածքն է Վանեցի Պ. Սարգիս Քարսեղեան Գնունու «Քրիստոնեան Վարդապետութեան ըստ Հովհաննեան Հոյականեայց Ա. Ելեղշեց. ընդունիւն հաւատութեան վեյց-նեմբար Ա. Քրոց է պէտք հանին Ելեղշեց։» :

Գրի խորագրից թէպէտ յայտնի չէ դասսագիրք լինելը, բայց յառաջաբանի մէջ Պ. Հեղինակը իւր գիրքը դասսագիրք է կոչում։ Ուրեմն Պ. Գնունու գիրքը, իրեւ դասսագիրք պէտքէ նկատողնութեան առնել։

Մեր դպրոցներում պարտաւորական առարկաների շարքում մայրենի լեզուի հետ առաջին տեղը բռնումէ կրօնը։ Այն մի առարկայի դաստիրք և մինչև անդամ ընթերցանելի գիրքը հրատարակելուց յետոյ՝ քննութեան է ենթարկվում։ իսկ կրօնի դասսագրերը նոյն բաղդին չեն արժանանում։ որով երեսումէ, կամ այդ գրքերը իւրեանց վերին աստիճանի կատարելութեամբ անպայման կերպով ընդունուելու են Հեղինակի նպատակի համար, և կամ բոլորովին ստոր աստիճանի վերայ գտնուելով, չ'արժեն քննութեան ենթարկուելու։

Պ. Պ. Արմէօննանի Սրբազան պատմութիւնից յետոյ, Հետզհետէ լրյու տեսան մի քանի գրքեր ընդ որս և Հ. Ստեփաննոս Ա. Քահանայ Տ. Ստեփաննոսեանի կրօնի դասսագիրքը։ Սրբազան պատմութեան մի դասսագիրք էլ հրատարակուեց Մոսկուայում։ բայց ոչ մինը իրեւ դա-

սագիրք քննութեան չենթարկուեցին. նոյն բաղդին արժանացաւ և Պ. Գնունու գիրքը Յանկալի էր կրօնի դասաւանդութեան համար պատրաստուած գրքերն ևս քննադատել, որպէս զի այդ առարկան իւր կարեռութեամբ աւելի կատարելագործուած դասագրքով կամ ձեռվ աւանդուի:

Մինչև եղածները ըստ արժանոյն ըը քննադատուին իրեւ դասագիրք, նորն չեղինակողները կարող են միշտ հներին հետևելով, իւրեանց նպատակի գէմ մեղանչել, իսկ նպատակն է ջանալ առարկան զիւրլմբունելի գարձնել և այնպիսի մի ամփոփ ձեւ տալ՝ որ աշակերտը կարողանայ ամբողջ առարկան իւր էական սկզբունքով իւրացնել. Իչարէկ ամեն ոք երբ ձեռներէց է լինում մի գիտութեան կամ առարկայի դասագիրք զրել, եղածների թերութիւնները նկատելով, նորի անհրաժեշտութիւնը զգալի տեսնելով է անում. Այսպէս ևս Պ. Գնունին եղածների թերութիւնները նկատելով, անհրաժեշտ համարեց մի նորի լինելը և ձեռք տուեց իւր քրիստոնէականը գրելուն. Եթէ եղածների վերայ նկատողութիւններ լինէին և կարդացած լինէր Պ. Գնունին՝ մեծ օգուտ քաղած կըլինէր իւր գրքի պատրաստութեան համար. բայց ընդհակառակն է եղել. Ինչ և իցէ:

Յառաջաբանը գրքի բովանդակութեան համառօտ ծրագիրն ու չեղինակի տրամադրութեան տիպարն է. ուստի նախ քան գրքի մասին խօսելս մի քանի խօսք Պ. Գնունու գրքի յառաջաբանի մասին անտեղի թող չըհամարուի. Պ. Գնունին յառաջաբանի առաջին հատուածի մէջ բացատրումէ կրօնի բարձր նշանակութիւնը, որին կցումէ մի քանի անորոշ խօսքեր. — «Հերութիւնու բայց է, վ-հ-մ-է և այլ այսպիսի փաղաքշական բառեր որ ես չեի յիշիլ՝ եթէ Պ. Գնունին դասագրքի մէջ նորից յիշած չմինէր այդ բառերը ի գէմս բողոքականների. Եւր մասին խօսելով՝ ասումէ. «Թէպէտ բաւականին հերթած եմ նոյն ոչխարազգեստից մոլար և թունաւոր վարդապետութիւններն, բայց յանձն առած չեմ հայաստանեայց եկեղեցւոյ ազատամիտ վեհանձնութան բարձր աստիճանէն խոնարհել՝ ստորանալ, նոցա հաւասարել և ըստ այնմ պատասխանել խիստ լեզուաւ. այլ միայն ապացուցած եմ ճշմարտութիւնն և առ այն տանող ուղիղ ճանապարհն, յորմէ մազիւ չափ շեղումն է մոլորութիւն, հերետիկոսութիւն և յաւիտենական կորուստ.» եր. Պ.

Յայտնի չէ թէ Պ. Գնունին ուրիշ կրօնական գիրք չեղինակել է թէ ոչ. որով հերթած լինի ոչխարազգեստ գայլերի մոլար և թունաւոր վարդապետութիւններն. այս խօսքերը յայտնի չէ թէ պարոն Գնունին ում է ուղղում, և ում համար է գրում. Զըկայ մի ազգ, որ Ա. գիրքը իւր սկզբունք ունենալով, իւր եկեղեցին գիւտական վոհմակ գարձրած լինէր. ուր Քրիստոսի լուսատու խօսքերն են հնչում, այն տեղը խաւարաւէր զիւտական վոհմակ չի կարող դառնալ բնաւ. Գիտէք, Պ. Գնունին, աշխարհս մի դատարկ կարասի պէս և, ինչ որ ձայն տաք՝ նորա արձա-

գանքը պիտի լուէք, Պէտքէ յարգել իւրաքանչիւր ազգի սեպհական եւ կեղեցին. և առանց դեպ ի ուրիշները ատելութիւն սնուցանելու. հոգով սրտով պէտքէ միանալ իւր եկեղեցու հետ.

Պ. Գնունին ասումէ. «Յանձն առած չեմ Հայաստանեայց եկեղեցւոյ ազատամիտ վեհանձնութեան բարձր աստիճանէն խոնարհել՝ օտորանալ.» բայց Հայութ, Հայութ քործածելով՝ բաւական ստորացած էք երկում Հայաստանեայց եկեղեցւոյ ազատամիտ վեհանձնութեան բարձր աստիճանէն վասն զի, Հայաստանեայց եկեղեցին միշտ յարգել է օտար ազգերի ազգային առանձնայատկութիւնները կրօնական ծէսերի հետ խառնած տեսնելով. Խւ ով որ իւր եկեղեցուն դիպչել է կամեցել՝ նորան արժանի հատուցումն է արել, երբ մինը չի կամենում իւր պատուին դիպչեն՝ ինքն էլ ուրիշի պատուին պէտքէ չըդիպչի. Խաւ որ ուրիշի ազատութիւնը չի գնահատիլ, ազգային առանձնայատկութիւնները չի յարգիլ, արժանի չէ ազատ լինելու. Հայաստանեայց եկեղեցին Պ. Գնունու շափ նեղասիրտ չէ, այլ յարգելով ուրիշի ազատութիւնը, գնահատել է տուել իւր ազատ լինելու ջանքը, և այսօրուան օրս Շահ Եփէլցի փառաւոր կոչումը վայելումէ մեծ արժանաւորութեամբ. Քրիստոնեայ միւս եկեղեցինները երբեմն երբեմն ջանք են արել Հայաստանեայց եկեղեցու ազատութիւնը Ճնշել և առանձնայատկութիւնը բառնալով՝ իւրեանց եկեղեցու հետ միացնել. բայց Հայոց եկեղեցին նոցա դէմ մաքառել է միշտ, իւր անկախութիւնը պահելու համար, առանց Դիակոն Քանաչի Շահ Եփէլցի և Հայութ քործածելու բառերը գործածելու և եթէ հարգել եղել այդպիսի բառեր գործածելու՝ դեպի ինքն ուղղածներն է յետ դարձել. Պ. Գնունու յառաջարանի մէջ գործածած այդ նախադասութեան վերայ սակաւ մի երկար խօսեցի. վասն զի յառաջարանը գրի ոգու յայտարարն է. և այդ բառերից երկումէ թէ Պ. Գնունին ինչ ոճ է գործ ածելու իւր գրքի մէջ. Խոկ այդպիսի ոճով գրուած դասագիրքը մանուկների ձեռքը տրուելիք բան չէ. Դասագրքերի մէջ անորոշ և խիստ բառեր գործածելն առանց պատճառը պարզաբանելու՝ խոչեմութիւն չէ.

Պ. Գնունին երբեմն երբեմն իւր դասագրքի մէջ վիպասանութեան դարձածներ է գործածում. որպիսի է 192 հարցման երկար պատճառը. ինչում առանց չուարելու պատասխանել. Այս ձեռք յօրինուած դասագրքերը, մանաւանդ եթէ պատասխանները կարճ ու ամփոփ են լինում, աշակերտի համար զուարձալի մի պարապմունք են դառնում. այս գեպքում հանգուցեալ Մսկրի Հաւատապատում, Քրիստոսապա-

Մանկավարժներից ումանք դասագրքի հարց ու պատասխանով յօրինելը հարկաւոր են համարում միայն այն պատճառով, որ հարցը իւր մէջ պարունակելով պատասխանի էական մասը, դիւրութիւն տայ աշակերտին առանց չուարելու պատասխանել. Այս ձեռք յօրինուած դասագրքերը, մանաւանդ եթէ պատասխանները կարճ ու ամփոփ են լինում, աշակերտի համար զուարձալի մի պարապմունք են դառնում. այս գեպքում հանգուցեալ Մսկրի Հաւատապատում, Քրիստոսապա-

տում և Հրահանգ քրիստոնէական վարդապետութեանի աշխարհաբառ համառօտութիւնը բաւական յաջողաւթիւն ունին, միայն լեզուն շառ խորժ է, Պէտքէ խոստովանել որ, Հարց պատասխանով կարգաւորուած դասագրքերը յափշտակումեն մանուկից ինքնիրան մտածելու առիթը՝ Պ. Գնունու գասագիրքը այս կողմից էլ պակասաւոր է, վասն զի պատասխանները ոչ միայն կարճ ու ամփոփ չեն, այլ շատ տեղ բռնորովին չեն համաձայնում հարցերին. օրինակ՝ 56, 57, 58, 59, 60 Հարց ու պատասխանները, որոնց իւրաքանչիւր մինից երկու հարց ու պատասխան պէտքէր կազմել. 62, 63, 64 Հարցումներին չեն յարմարվում պատասխանները. Եկրդ հարցման պատասխանի մէջ կարծիքը թէ Եգիպտոսում Մովսէսի ժամանակով Յակովիրին տեսնողներ դեռ կային, տարակուսական է, Արքահամի, Սեմին ժամանակակից լինելն ևս տարակուսական է. վասն զի Սեմը Արքաքսագին ծնելուց յետոյ ապրեց 500 տարի. իսկ Արքաքսագի ծնունդից մինչեւ Արքահամի ծնունդը 944 տարի է, որով յայտնվումէ որ Սեմը ԱՊ տարի Արքահամի ծնունդից առաջ վախճանել էր, (Ծննդ. զլ. ԺԱ. համ. 10—27): Ըստ երկար կը լինէր բոլոր անյարմար ու երկար պատասխանները մէջ բերել:

Յառաջաբանի մէջ առաջինից վերնագրով հատուածի սկզբունքին ըստ իս չի կարելի համակրել, վասն զի պարո՞ն Գնունին ասումէ. «Որպէս զի մեր գրածն բազմաց դիւրահասկանալի լինի և դիւրըմբռնելի, ընտրած եմ պարզ գրաբառից և գրաբառի մերձ աշխարհաբառից բաղկացեալ ոճով գրել. բնաւ չհետեւելով այս կամ այն գաւառական ոճին, և ոչ իրթին գրաբառով անհասկանալի անելով բազմաց», երես Դ. Պ. Գնունին իւր գրածն բազմաց դիւրահասկանալի և դիւրըմբռնելի անելու ժամանակ, մոռացել է որ իւր գիրքը մանուկների դասագիրք է լինելու և մանուկներին պէտքէ դաստիարակել իւրեանց մայրենի հասկանալի լեզուով. Պ. Գնունին ասումէ որ ինքն չէ հետեւել այս կամ այն գաւառական ոճին. վերոյիշուած հատուածի մէջ դրանք և դիւրըմբռնելի անելու համար երկու բարբառների և գրաբառի գարձուածներն էլ իմուղել է իւր գրքի մէջ. որով բազմաց դիւրահասկանալի և դիւրըմբռնելի անելու աել, բազմաց անընդունելի և անհասկանելի է արել:

Յառաջաբանի «նիւթ կամ բոլվանդակութիւն գրքիս» վերնագրով հատուածը պարզաբանումէ գրքուկի գլխակարգութիւնները. որոնց ութիւն մասն է բաժանել. Յառաջաբանի մասին այսքանը բաւական համարելով գրքուկի որպիսութիւնը ցոյց տալու համար՝ մէջ բերինք մի քանի կտորներ, որոնցով ամբողջ գիրքը կարելի է գնահատել:

Յօդ----- սու-ջին. «Նպատակ մարդկան, երջանկութիւն, առ այն հասնելոյ միջոց, կրօն և նորա զանազան ձիւղեր», Զընօսելով դեռ Պ.

Գնունու գրքի վեղությմասին, խօսքս պատասխաննելու համար, թէ չարցումներին յարմար չեն պատասխանները, մէջ եմ բերում նոյն իսկ ռուազին հարցը, Պ. Գնունին հարցնումէ. «Ի՞նչ է մարդկան նպատակը (1). Պատաս.—Մարդը որ Աստուծոյ արարածոց մէջ կատարելագոյն է և գերազանց, իւր մտաւոր բարձր կարողութեամբը և միշտ երջանիկ լինելոյ բազանաքն կը յայտնէ իւր հոգւոյ անմահութիւնը, որ (հոգւն անմահութիւնը թէ մարդը) և այս աշխարհի մէջ միշտ կարօտ վիճակի մէջ կը դանէ զինքն, ոչ մի բանով չի յագենար, միայն յաւիտենականութեան յաւսով կը սնանի և կապրի, որոյ համար միայն ստեղծեալ է. Ինչ յարաբերութիւն հարցի ու պատասխանի մէջ. ո՞վ կը կարծէր թէ, մարդու նպատակը սահմանելու համար հարկաւոր է այնքան պատեպատ գիպշել. Ես լինեի Գնունու աշակերտը, «Ի՞նչ է մարդկան նպատակը՝ հարցին՝ կպատասխանէի. — Մարդկան նպատակն է այս աշխարհի վերայ գտնուած Աստուծոյ բարիքը վայելելով երջանիկ լինել, և Աստուծոյ անունը փառաւօրել *). իսկ հանգերձեալում, հոգու անմահութեամբ յաւիտենական արքայութիւն ժառանգել.

Յրդ հարցման պատասխանն ևս լաւ կազմուած չէ. Պ. Գնունին հարցնումէ. «Ի՞նչ է առաքինութիւնը»: պատասխանումէ. «Առաքինութիւնն է հաւատալ կենդանի և ճշմարիտ Աստուծած, ճանաչել, սիրել (զնա կամ նորան) և յուսալի նա, և նորա պատուիրանքներն կատարել» ևլն. Պարոն Գնունին առաքինութիւն բառը իւր իսկական նշանակութեամբ չէ գործ ածել. ապա թէ ոչ Յրդ. հարցմանը այսպիսի պատասխան պէտքէր տալ. «Առաքինութիւնն է մի յաղթութիւնն, որ մարդո իւր սկզբունքը պաշտպանելու և իւր մարդկային կոչմանը արատիք չըրերելու համար պարտաւոր է կատարել». Գոնէ նախնեաց գրուածների մէջ առաքինութիւն բառը այդ մաքով ենք գործածուած տեսնում. մանաւանգ Եղիշէի մէջ:

Կը Հ հարցման պատասխանն էլ լաւ կազմուած չէ. Պ. Գնունին հարցնումէ. «Ի՞նչ է կրօնը»: պատասխանումէ, «Կրօնն Աստուծոյ և մարդոց մէջ եղած ուխտն և պայմանն է, որով Աստուծած և մարդ սրանչելի հաղորդակցութեամբ միմեանց հետ կը կապուին, վասն զի կրօնի անթերի պահպանութեամբը միայն կարէ մարդ Աստուծոյ շնորհաց մէջ յարատեիլ, յԱստուծած հաւատալով, յուսալով ի նա, և սիրելով զնա, այսինքն է պաշտել զնա». Ես լինեի Պ. Գնունու աշակերտը Կը Հ արցմանը այսպէս կպատասխանէի. «Կրօնն է իւրաքանչիւր մարդու ներքին համոզման զգացումը, որ վերաբերումէ իւրաքանչիւր ոքի պաշտած Աստուծուն. Այս զգացումը անշիջանելի է մնում անդրդուելի յուսով, հաստատուն հաւատով և անպայման ու անկեղծ սիրով».

(*) Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեկ, իւ իրաւունք քո օդանեցեն ինձ. Սադմ.

7 և 9 բարձրութերը մի ևն զյունն են, որոնց ամենեին չեն յարմարվում պատասխանները: 7 բարձր Գնունու ոճով պէտքէ լինէր. Բաղմաստուածութեան հետեւղք ո՞յք են և ինչի՞ կերկրպագեն. իսկ 9-ր հարցը պէտքէ լինէր. Բաղմաստուածութեան կրօնը քանի՞ աղանդի կը-րաժանուի:

Այսքանը բաւական համարելով անյարմար հարց ու պատասխանները ցոյց տալու համար, դառնամ՝ Պ. Գնունու գիրի լեզուի մասին խօսելիքիս:

Պ. Գնունին կրօնը ճշմարիտ Աստուծուն միայն վերագրելուց յետոյ, հակառակ իւր սկզբունքին՝ բազմաստուածութիւնն ևս կրօն է անուանում. պյաղիսի թեթեւ հակասութիւնները ներելի են Պ. Գնունուն:

Պ. Գնունու գիրը պակասաւոր է լեզուի կողմից իւր գործ ածած անհեթեթ ոճերով ու գարձուածներով, և անհասկանալի ու սխալ պատմական տեղեկութեամբ, օրինակ. 11 պատասխ. «Սորա տաճարն կասուի Բակոտն, զոր Աստուծոյ տեղ կընդունեն Տալայլամայ իրեն անմահ քահանայ մի սրբացեալ»: Եթէ զոր բառը յարաբերումէ Բակոտին, այն ժամանակ բարձրաց, որ տաճարի անունն է, յանկարծ փոխվումէ անմահ բահանայ մի սրբացեալ, և Տալայլաման եղակի ձայնով իշտանի բայի տէր կամ ենթակայ բային է դառնում: Բայց իսկապէս ո՞րն է անմահ բահանայ մի սրբացեալ, բակոտն՝ թէ Տալայլաման, կըխնդրենք Պ. Գնունուց առանիձ յաւելուածով ինչպէս այս նոյնպէս և միւս պյաղիսի վայելուչ պարբերութիւնները ու պատմական սխալներն ուղղել:

13 բարձրութան պատասխանը Հրէից մասին Պ. Գնունին հակասութիւններով է սկսում և վերջացնում: Այդ կտորը մէջ բերենք Պ. Գը-նունու ոճի որպիսութիւնն ու դատողութեան ձեւ ցոյց տալու համար, հարց. «Ո՞րն է Հրէից կրօնը»: (13): Պատասխ. «Հրէից կրօնն է Մովսիսական հին օրինաց համաձայն ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւն, յայտնութեամբ և միջնորդութեամբ նահապետաց և Մարգարէից: Բայց նոր օրէնքն և զնորա հիմնադիրն Յիսուս ուրանալով՝ ուրացած են և զհինն ևս որ նոր օրինաց ոտուերն էր: Արքահամէն սկսեալ մինչև ի գալուստ Քրիստոսի. ճշմարիտ կրօնի հետեւղ և Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ կհամարուեին (ուրեմն իսկապէս չէին): իսկ Քրիստոսի գալստենէն մինչեւ ցայժմ այլ և այլ աղանդներով խմորեալ՝ ճշմարիտ Կրօնէն շեղեալ, յաշխարհ ցիր ու ցան եղած են: Թէպէտ օմանք ի Քրիստոնէութիւն գարձան, բայց ազգի մեծագոյն մասն անդարձ մնաց-որք այժմ երկք ճիւղի բաժանուած են: Թալմուտական, Գարայիմ և Հոերերեան: Ինչպէս երեսումէ Պ. Գնունին ուշ չէ դարձրել հարկա-ւոր տեղերը կետեր գնել: որով շատ տեղեր անհասկանալի են մնում: Աէտի բացակայութեան պատճառով վերօդրեալ պատասխանի առաջին նախագասութիւնը դժուարըմրոնելի է: այս նախադասութեան մէջ է բայի ինդիրը ո՞րն է: տէր բային ո՞րը: Հընչը ի՞նչ է տէր բային: —

թէ ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւնը, Պ. Գնունին չէ կարողացել հարկաւոր տեղերում զիմորոշ յօդերը գործ ածել, ես յատուկ Պ. Գնունու զբքի ամենապարզ կտորը օրինակ բերեցի, որ չ'ասի թէ բծախնդրութեամբ աշխատել եմ անկանոն գրուածը (որոնցով լի է զիրքը) օրինակ բերել, Հրեայք նոր օրէնքը ըընդունելով, հինը բնաւ ուրացած չ'են, Եթէ Արքահամից սկսած մինչև Յիսուս Քրիստոս ճշմարիտ կրօնի հետեւղ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ էին համարվում, իրանք իրանց դարձեալ այժմ ևս ընդէւլ ժուշիւրդ է համարում, Զոկ բան է որ նոքա Յիսուս Քրիստոսին չեն համարում խոստացեալ լիւնեցն, Խոկ աղանդ-ների՝ նոքա արգէն Քրիստոսից շատ առաջ բաժանուած էին. ինչպէս ինքն Պ. Գնունին էլ խոստովանումէ ծանօթութեան մէջ, Յիսուս Քրիստոս պատուիրեց իւր աշակերտներին զգոյշ լինել սագուկեցիների և փարիսեցիների խմօրից, Դասագրքի մէջ պէտքէ առաջ բերած պարագաները փաստերով մեկնաբանել և պարզել. Պ. Գնունին բրահմականութեան բուդգականութեան և կոնֆոկիոսի աղանդների վերայ բարեհաճել է հատ կտոր տեղեկութիւններ տալ, իսկ Հրեաների երեք կրօնական հերձուածի բաժանուած լինելը աշակերտներին ուսուցանելով և իւրաքանչիւր հերձուածի անունը տալով (Թալմուատական, Դարայիմ և Հուկերեան) զլանումէ նոցա սկզբունքի հետ ծանօթացնել աշակերտներին, Պ. Գնունի, աշսկերտները, այդ երեք հերձուածների ինչութիւնը իմանալու համար ո՞ր գրքին դիմեն. Եթէ աղանդների ինչութեան մասին տեղեկութիւն տալը աւելորդ էք համարել, ինչո՞ւ էք անունները տուել, Դուք որ չէք բացատրել, գոնէ յայտնէիք թէ ո՞ր գրքին դիմելու է բաւականութիւն ստանալու համար:

(Մնացեալ հետեւլ համբաւում.)

ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԵՑ.

ՄԵՐ ՎԵՀԱՓԱԾԱ ՀՈՐ

ԳԼՈՐԴ Դ-ի ՃԻՐՄԻՆ

Յատիսնագան յիշաակն արդարոց
օրնութեամբ աղիցի:

Շատ ժամանակ չի անցել այն թշուառ օրից, որ մենք Ա. Եջմիածնի Գլորգեան Ճեմարանի աշակերտներս և ուսանողներս գժրազգութիւն ունեցանք երկար ժամանակ սուբ պահել և ողբալ մի մաս, մի մեծ մարդու մահ, մեր խոցը խոր էր, վիշտը մեծ, կսկիծն ու ցաւը անտառելի. որովհետեւ այդ մահով Հայոց աղջը զրկուեցաւ իւր ուսումնակը